



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍՈՒՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՎԱՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՄԱՐԻՆԱ ՄԱՎԵԱՆԻ ԳԵՂԱՆԿԱՐՆԵՐՈՒՆ ՑՈՒՅԱՆԴԵՍԸ՝ ԱշԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԵԶ

Մեր Թեմի արուեստասեր զաւակները Մարտի Վերջին շաբաթավերջին հազուադեա ժամադրութիւն մը ունեցան հայկական արուեստի արտայայտիչ Սարինա Մավեանի հետ, որ Խտալիայէն յատկապէս հրաւիրուած էր ցուցադրելու հայկական մանրանկարներէ ու հոգեւոր ժառանգութիւններէ ներշնչում առած իր գործերը:

Ցուցահանդեսը, որ կազմակերպուած էր Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման Յանձնախումբին կողմէ, տեղի ունեցաւ Ազգային Առաջնորդարանի «Տիգրան Եւ Զարուհի Տեր Ղազարեան» սրահին մէջ, Ուրբաթ Եւ Շաբաթ օրերուն, հովանաւորութեամբ Թեմիս բարեհիւամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի Եւ Ներկայութեամբ ժողովականութեան ներկայացուցիչներու: Բացումը կատարեց Առաջնորդ Սրբազնը: Ցուցադրութեան դրուած էին սրբանկարներ, մանրանկարչական Եւ ընդհանրապէս քրիստոնեական մեր հաւատքն ներշնչում առած գործեր:

Ներկաները ողջունող իր խօսքին մէջ, կազմակերպիչ յանձնախումբի ատենապէտ Տիար Յրայր ճերմակեան հակիրծ ծեւով ներկայացուց արուեստագետը՝ Սարինա Մավեանը, որ ծնած է Վենետիկ ու հասակ առած՝ Միլանոյի մէջ, փոքրաթիւ հայ գաղութի օճախին մէջ, Եւ սակայն, հայկական հինաւորց արուեստները զիսք ամուր կերպով կապած էն մեր մշակոյթին ու արուեստին, ու ան դարձած է քրիստոնեական մեր արուեստի ամենն գեղեցիկ արտայայտութիւնները եղող՝ մանրանկարիչներու Եւ ծաղկողներու ժառանգորդ-աշակերտը, անոնց ուղին շարունակողը:

Սրտի խօսք մը արտասանեց արուեստագիտուիին, որ առաջին հերթին շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ սրբազնանին ու ազգային Առաջնորդարանին, որ զիսք հրաւիրած էին այս ցուցահանդեսին համար: Ան գոհունակութիւն արտայայտեց Լու Անճելըս իր այս այցելութեան համար, Նկատի ունենալով, որ առիթ ունեցած է հաղորդակցութեան մէջ մտնելու մեծաթիւ հայերու հետ ու ահաւասիկ իր հոգեկան արտայայտութիւնները կը բաժնեկցի անոնց հետ:

Բացման հանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազնը: Ան առաջին հերթին ողջունեց արուեստասեր ներկաներն ու ցուցահանդեսին կազմակերպիչները, ապա վեր առաւ Սարինա Մավեանի իւրայատկութիւնն ու արժեքը, այն առումով, որ հայկական մեծաթիւ

օճախների հեռու ապրող այս հայուիին հոգեկան ու զգացական շատ ուժեղ ու ակարգութելի կապ մը ունի հայութեան ու անոր մշակութային ժառանգութիւններուն հետ, կ'ապրի մեր անսիրական գանձերով, որոնք կը հարստացնեն իր արտայայտութիւնները: Ան այդ ժառանգութիւններուն հետ ստեղծած է հաղորդակցութիւն մը, որ չէ մնացած սիրողի ու դիտողի սահմաններուն մեջ, այլ արտայայտութիւն գտած է գոյսով ու ձեւերով, մեր սուրբերուն ու տաճարներուն հետ իր կապը հաստատող գեղանկարներով, իր հոգիին ու հաւատքին անկեղծ արտայայտութիւններով: «Մեր մշակոյթին հետ իր այս հոգեկան կապն ու իր հայութեան հաւատարիմ իր հոգին զնահատելով է որ կազմակերպեցինք այս ցուցահանդեսը», ընդգծեց Առաջնորդ Սրբազնաը եւ առ ի զնահատանք Սարինայի գործին ու արուեստի աշխարհին, անոր նուիրեց Ազգ. Առաջնորդարանի մանրատիապը բովանդակող յուշանուեր մը:

Ներկաները ապա վայելեցին Սարինա Մավեանի գործերուն գոյսերն ու խորհուրդները, միաժամանակ վայելելով Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Սարմինին հիւրասիրութիւնը:

## **EXHIBIT OF ARTIST MARINA MAVIAN'S WORKS AT THE PRELACY**

On the evening of Friday, March 28<sup>th</sup>, the opening of an art exhibit featuring the works of Italian-Armenian artist Marina Mavian took place at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over the opening of the exhibit which was organized by the Prelacy Outreach Committee.

The evening began with remarks by Outreach Committee Chair Mr. Herair Jermakian who welcomed the guests and introduced the artist who, despite being born and raised in Italy where there was virtually no Armenian community, was deeply drawn to Armenian art and culture as evidenced by her works. The artist was then invited to offer her remarks in which she thanked the Prelate for inviting her to the Prelacy to exhibit her works, and expressed her appreciation for the opportunity to visit Los Angeles and to be among such a large Armenian community.

The official program concluded with remarks by the Prelate who began by greeting the organizers of the event and the guests. He commended the artist for her works, emphasizing her strong spiritual and emotional bond to our ancient heritage as her inspiration, which she vividly expresses through her paintings of our Saints and Churches. He continued that it was in recognition of this spirit that this exhibit was organized. At the conclusion of his remarks the Prelate presented Ms. Mavian with a memento.

Guest then had the chance to view and purchase the artworks and to enjoy a reception organized by the Ladies Auxiliary.